

Փոփոխական օդեր ըլլալու ատեն՝ տակի դիրտը կը պղտորի, իսկ օդին զուտ ու հանդարտ կը մնայ :

Երբ որ օդը գեղեցիկ պիտի ըլլայ, տակի դիրտին վրայ գզած բրդի կամ բամպակի կտորներու պէս բաներ կ'երևնան . իսկ օդին նոյնպէս զուտ կը մնայ :

Երբ որ ան ծիւերը շատնան ու վեր ելլեն, և հեղանիւթը պղտորեն ու խուովեն, փոթորկի նշան է :

Երբ որ հեղուկին երեսը բարակ մաշկ մը կը կապէ սառի պէս, և տակի դիրտը վեր կը բարձրանայ՝ անձրևի նշան է, իսկ ձմեռը՝ ձեան :

Կուխի կամ ամպի պէս նիւթը շատնայ նէ՝ փոթորկի նշան է : Իսկ երբ որ տակի դիրտը երեսը կ'ելլէ, ու հեղուկը տակը պայծառ կը մնայ, գետ նաշարժի նշան է :

Երբ որ դիրտը երկու կը բաժնուի, կէսը տակը կը մնայ, ու կէսը երեսը կ'ելլէ, ու մէջի հեղանիւթը զուտ ու մաքուր կը մնայ, երկրորդ օրը բոլոր անձրև կուգայ :



Ղանձերը Զարդելու հնարք :

Եթէ կտոր մը կուայաք՝ ըսուած փայտէն, և մանր ջարդելէդ ետքը ջրին մէջ եփէ . ան ջուրը մեղրի հետ խառնէ, ու պնակի մը մէջ լեցուցած դիր ան տեղը՝ ուր որ ձանձ՝ շատ կայ : Ղանձերը ան անուշ մեղրը ուտելուն պէս՝ կը թունաւորուին, ու թմրած՝ ասդիս անդին կ'իջնան կը սատկին :

1 Լտ. Guajacum. Իս. Legno santo. Տ՝. Փէ. Ղանձեր աղածը :



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ,

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ ցամաք ու ջրոս երկիրները հարգուս հրատարական հարողութեանը կամ խելքին վրայ ինչ ազդեցութիւն ունին :

Երբ որ Երկրագնաց ամէն մաւսերէն վեր է իրեն ամէն տեսակ յառաջադիմութեամբ, մանաւանդ գիտութեան և իմաստութեան մէջ ծաղկած ըլլալովը, պատճառը ինչ է ըսենք նէ՝ իմաստուն աշխարհագետները շատ բան կը զուրցեն, և ամէն ալ իրաւ կրնան ըլլալ : Եւ ճամարիտ պատճառներէն մէկն ալ ան է, որ Ովկիանոսին երկու մեծամեծ թւերը, այսինքն Սիջերկրական և Պալթիկ ծովերը, և ասոնցմէ ձեւացած ծոցերը՝ Եւրոպայի ցամաքին մէջ մտած են, ու մէյմէկ ջրանցքի պէս՝ հարաւէն հիւսիս կը վազեն . և աս ծովերը թափող մեծամեծ գետեր կան՝ որոնց մէջ տարւոյն մեծ մասը նաւարկութիւն կ'ըլլայ, ու աշխարհիս հեռաւոր կողմերը կ'երթըցուի . մարդիկ ալ երկրիս զանազան բերքերը իրարու տանելով ու բերելով՝ իրարմէ նոր նոր գաղափարներ կը սորվին, խելքերնին կը բացուի . ուստի կը տեսնենք որ քաղաքականութիւնը ծովեզերեայ տեղուանք, գետերու բերան, և բարեբեր կղզիներու մէջ միշտ աւելի ծաղկած է վաճառականութեամբ՝ քան թէ չոր ցամաք երկիրներու մէջ :

Ինչո՞ւ համար այնչափ ծաղկած էր հին ատենի Եգիպտացուց քաղաքականութիւնը . — Եւ մեծ պատճառներէն մէկն էր՝ Եգիպտոս գետը, որուն երկու ծայրերը այլևայլ ձիւղեր բաժնուած ըլլալով, անկէ զատ՝ ուրիշ ջրանցքներ ալ ունենալով՝ քաղաքներն ու աւանները իրարու հետ հաղորդակցութիւն ունէին . ասանկով վա-